*Հավելված N 2*
*ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/30-ՀՆՆ1 ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*
*2026թ.-ի հուլիսի 31-ի N 1.2 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026թ.-ի հուլիսի 31-ի N 1.2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/30-ՀՆՆ1**

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/30-ՀՆՆ1» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ:** Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում՝ 6, 22, 27, 28, 41-րդ չափաբաժինների մասով տեղի են ունեցել վրիպակներ, որի արդյունքում նշյալ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերն անհրաժեշտ է փոփոխել և ներկայացնել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ:

**Փոփոխության նկարագրություն:** Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում՝ 6, 22, 27, 28, 41-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը փոփոխվել և ներկայացվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

«6-րդ չափաբաժին - Զուգարանակոնքի գոֆրա՝ զսպանակաձև, երկարությունը բաց վիճակում ոչ պակաս քան 500 մմ, փաթեթավորումը գործարանային: Զուգարանակոնքի հետ միացման հատվածում հերմետիկությունն ապահովող օղակը լինի սև ռետինից և ոչ ՊՎՔ-ից: Քաշը՝ առնվազն 500գր: Մատակարարը պարտավոր է նախքան մատակարարելը նմուշը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

22-րդ չափաբաժին - Բանվորական ձեռնոց, պատրասված ամուր կտորի գործվածքից, 5 մատանի, զույգով, հակասայթակող ծածկույթով, քաշը՝ առնվազն 50գր:

27-րդ չափաբաժին - Սանտիմետրային (չափիչ) ժապավեն 30մ երկարությամբ ,ժապավենի լայնությունը առնվազն 15մմ: Չափման միավորը ՝սանտիմետր ,հստակ և ընթեռնելի նշագրմամբ: Ժապավենի նյութը մանրաթել ,մարմնի նյութը ՝ հարվածադիմացկուն պլաստիկ կամ համարժեք : Ապրանքը պետք է լինի նոր ,չօգտագործված,գործարանային փաթեթավորմամբ:

28-րդ չափաբաժին - Կանաչապատ տարածքները ոռոգելու համար 3/4 դույմ չափի ճկուն խողովակ: Խողովակը լինի փափուկ, ՊՎՔ-ի չվերամշակված՝ առաջնային հումքից: Ներսի տրամագիծը 19.5մմ, ամրանավորված թելով: Երկարությունը հստակ 50մ, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով: 50մ-ի քաշը՝ առնվազն 13.5կգ: Չափսերի շեղումը +- 2%:Նմուշը համաձայնեցնելով պատվիրատուի հետ ըստ անհրաժեշտության:

41-րդ չափաբաժին - Կանաչապատ տարածքները ոռոգելու համար 1/2 դույմ չափի ճկուն խողովակ: Խողովակը լինի փափուկ, ՊՎՔ-ի չվերամշակված՝ առաջնային հումքից: Ներսի տրամագիծը 16.5մմ, ամրանավորված թելով: Երկարությունը հստակ 50մ, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով: 50մ-ի քաշը՝ առնվազն 11.5 կգ:

Չափսերի շեղումը +- 2%:Նմուշը համաձայնեցնելով պատվիրատուի հետ ըստ անհրաժեշտության:»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/30-ՀՆՆ1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն